

**ԳՈՐԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Առևտրային բանկերը, ինչպես և ցանկացած առևտրային կազմակերպություն, գործում են շահույթ ստանալու նպատակով, այլ կերպ ասած՝ դրանք շահույթ հետապնդող կազմակերպություններ են: Սակայն, շահույթ ստանալու համար ցանկացած բանկ պետք է իրականացնի հետևյալ պայմանները.

- սեփական եկամուտներով ծածկի բոլոր ծախսերը, ներառյալ դեպոզիտների և ավանդների դիմաց վճարված տոկոսները;
- թանկ վաճառի իր ապրանքը՝ վարկային ռեսուրսները և բանկային ծառայությունները;
- մշտապես աշխատի բանկային գործունեության ծախսերի իջեցման ուղղությամբ:

Բանկի եկամուտների անհրաժեշտ նվազագույն չափը հաշվարկվում է հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ եկամուտներից պետք է ծածկվեն

ա) բանկային ծառայությունների ինքնարժեքը, կամ նրա ծախսերը;

բ) զուտ շահույթից շահաբաժինների վճարումները;

գ) ձևավորվող պահուստային ֆոնդերը (կապիտալ);

դ) հարկերը;

ե) զուտ շահույթից տնտեսական խթանման ֆոնդերի գումարները;

զ) բանկի զարգացման համար անհրաժեշտ շահույթի նվազագույն գումարները:

Առևտրային բանկերի շահութաբերության չափման նպատակով միջազգային բանկային պրակտիկայում կիրառվում են մի շարք մեթոդներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները: Ամենատա-

րածվածը շահույթի համադրման մեթոդն է բանկի ակտիվների ընդհանուր գումարի հետ: Շահույթի հարաբերությունը ակտիվներին արժեքային ցուցանիշ է մի բանկի շահութաբերությունը մյուսների կամ էլ ամբողջությամբ վերցրած առևտրային բանկերի համակարգերը միմյանց հետ համեմատելու համար: Շահույթի ցածր նորման կարող է լինել տվյալ առևտրային բանկի պահպանու-ական (կամ կոնսերվացված) վարկային ինվեստիցիոն քաղաքականության կամ էլ նրա չափից ավելի գործառնական ծախսերի արդյունք: Եթե ժամկե-տային և խնայողական ավանդների մասը (տեսակարար կշիռը) դեպոզիտների ընդհանուր գումարում անհամաչափորեն մեծ է, նրանց տոկոսների վճարման վրա կատարված ծախսերը կարող են գերազանցել միջին ճյուղային մակար-դակը: Բանկերն, անշուշտ, կարող են փորձել դա փոխհատուցել եկամուտների ավելացմամբ՝ ավելի ակտիվ վարկային ինվեստիցիոն քաղաքականության հաշվին: Շահույթի՝ ակտիվներին հարաբերության ավելի բարձր մակարդակը կարող է լինել բանկի արդյունավետ գործունեության, ժամկետային և խնայողական ավանդների (դեպոզիտների) ընդհանուր գումարում ունեցած փոքր բաժնեմասի, կամ էլ ակտիվներից ստացված բարձր եկամտի արդյունք: Չնարավոր է, որ վերջինիս դեպքում բանկը իրեն ենթարկում է նշանակալիորեն բարձր ռիսկի, որովհետև որքան մեծ են ակտիվներից ստացված եկամուտներն, այնքան, որպես կանոն, բարձր է դրա հետ կապված ռիսկը: Սակայն անպայման չէ, որ դա վատ հետևանքներ ունենա, քանի որ բանկն ամենայն հավանա-կանությամբ, հաջողությամբ է տնօրինում իր ակտիվները, չնայած այդ դեպքում բացառված չեն նաև ներուժային խոշոր կորուստները:

Շահույթի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին դեռևս ցույց չի տալիս, թե ինչպես է բանկը աշխատում նրա սեփականատերերի շահերի տեսանկյունից վերցրած: Այդ իսկ պատճառով բանկերը և նրանց բաժնետերերը սևեռուն կերպով հետևում են մեկ բաժնետոմսին ընկնող եկամտի ցուցանիշին: Վերջինս ցույց է տալիս բաժնետիրական կապիտալին ընկնող շահույթի նորման, այլ կերպ ասած, որքանո՞վ արդյունավետ են օգտագործվել սեփակա-նատերերի միջոցները տարվա ընթացքում: Սակայն, համեմատել տարբեր բանկերում մեկ բաժնետոմսին ընկնող եկամուտները դժվար է, քանի որ հնարավոր են տարբերություններ վճարվող դիվիդենդի չափերով: Եթե մի

բանկում այն բարձր է, իսկ մյուսում ցածր, ապա մնացած հավասար պայմաններում նրա աճի տեմպը առաջին բանկում կլինի ցածր, քան երկրորդում, անպես, ինչպես նախորդ տարում առաջին բանկում կապիտալի հավելածը ցածր է եղել: Այս մեթոդի հաջորդ թերությունը ի հայտ է գալիս այն դեպքերում, երբ արագ զարգացող բանկը բավականաչափ կապիտալային բազայի ապահովման նպատակներով ստիպված է լինում բաց թողնել նոր բաժնետոմսեր: Դա իր հետ բերում է մեկ բաժնետոմսին ընկնող եկամտի իջեցում, այնպես որ երկու-երեք տարվա ընթացքում նոր թողարկման վերավաճառքից հետո մեկ բաժնետոմսին ընկնող եկամուտը չի կարող ծառայել որպես բանկի գործունեության արդյունավետության հուսալի չափանիշ:

Շահութաբերության երկրորդ տարածված ցուցանիշը կապիտալին ընկնող շահույթի նորման է, որը ստացվում է զուտ եկամուտը կապիտալի գումարին հարաբերելով: Այդ ցուցանիշը համընկնում է բաժնետիրական կապիտալին ընկնող շահույթի նորմայի հետ, եթե բանկի կապիտալը ամբողջությամբ պատկանում է նրա տերերին, այսինքն բաղկացած է հետևյալ տարրերից. սովորական բաժնետոմսեր, արտոնյալ բաժնետոմսեր, չբաշխված շահույթ և պահուստային կապիտալ: Շատ ավելի խոշոր բանկերում կապիտալի մի մասը կազմավորվում է չապահովված մուրհակների և փոխառությունների հաշվին, այդ իսկ պատճառով նրանց մոտ ամբողջ կապիտալի շահույթի նորման որոշ չափով կտարբերվի բաժնետիրական կապիտալի շահույթի նորմայից:

Առանձին բանկում վերցրած շահույթի հարաբերությունը համախառն ակտիվներին կարող է համեմատականորեն բարձր չլինել, իսկ կապիտալի շահույթի նորման լինի շատ նշանակալի: Այդպիսի բանկում բարձր է դեպոզիտների մասը և ցածր է սեփական կապիտալի մասը: Այդ բանկը, հնարավոր է, որ վտանգի տակ է դնում դեպոզիտների հուսալիությունը և ռիսկի է դիմում իր վրա վերցնել կարգավորող մարմինների կողմից եկած քննադատությունը, չնայած որ տերերի կողմից այն գործում է արդյունավետ, քանի որ ապահովվում է կապիտալի շահույթի բարձր նորմա: Այդպիսի երևույթները վկայում են բանկի կապիտալի շահույթի նորմայի օգնությամբ շահութաբերության չափման մեթոդի թերությունների մասին:

Շահութաբերության չափման բոլոր մեթոդները ունեն իրենց դրական և

բացասական կողմերը, սակայն, ամբողջությամբ վերցրած բանկային համակարգի շահութաբերության գնահատման համար նպատակահարմար չէ կիրառել մեկ բաժնետոմսերին ընկնող եկամտաբերության ցուցանիշը: Ցանկացած այլ մեթոդ կարելի է կիրառել, սակայն, միշտ պետք է հաշվի առնել վերլուծության նպատակները:

Տնտեսագիտական գրականության մեջ հաստատվում է այն փաստը, որ որպես բանկային գործունեության ընդհանրացնող ցուցանիշ պետք է դիտել կապիտալին ընկնող շահույթի նորման, իսկ ըստ ակտիվների շահութաբերության ցուցանիշը առաջարկվում է դիտել որպես մասնակի ցուցանիշ: Որպես բանկի ներքին քաղաքականությունը բնութագրող ցուցանիշ: Վերջինս իր մեջ արտացոլում է նաև բանկային կադրերի արհեստավարժությունը, եկամուտների և ծախսերի տեսանկյունից վերցրած՝ նաև ակտիվների և պասիվների օպտիմալ հարաբերակցությունը: Արտասահմանյան բանկերը իրենց հաշվետվությունների մեջ արտացոլում են վերոհիշյալ երկու ցուցանիշների նշանակություններն էլ, հավանաբար, դրանք համարելով հավասարաչափ կարևոր բանկի գործունեության արդյունքների գնահատման գործում:

Առևտրային բանկերի շահութաբերության վերլուծության հաջորդ փուլն է հանդիսանում նրա եկամուտների և ծախսերի կառուցվածքի որակական և քանակական վերլուծությունը:

Բանկերի եկամուտների վերլուծության ժամանակ որոշվում է եկամտի յուրաքանչյուր տեսակի տեսակարար կշիռը նրանց ընդհանուր գումարում (կամ էլ եկամուտների համապատասխան խմբում): Եկամտային հոդվածների դիմամիկան կարող է համեմատվել նախորդ ժամանակաշրջանների հետ: Բանկի եկամուտների կայուն և ռիթմիկ հավելաճը բանկի որակական կառավարման արդյունք է: Եվ ընդհակառակը, ակտիվային գործառնությունների ղեկավարման վատացումը արտահայտվում է եկամուտների հավելաճի փոքրացման մեջ: Վարկային գործառնությունների եկամտաբերությունը կարելի է վերլուծել այնպիսի ցուցանիշի օգնությամբ, որը հաշվարկվում է որպես գործառնական եկամուտների և տրամադրված վարկերի ընդհանուր գումարի հարաբերություն: Նման կերպով կատարվում է հաշվեկշռի ծախսային հաշիվների վերլուծություն: Որոշվում է ծախսերի յուրաքանչյուր խմբի տեղը և

դերը նրանց ընդհանուր գումարի մեջ, ինչպես նաև արժեքներին սպասարկման վրա կատարված ծախսերի միջին գումարը:

Ինչպես արդեն նշել ենք, բանկի եկամտաբերության (շահութաբերության) հիմնական ցուցանիշն է հանդիսանում շահույթի հարաբերությունը բաժնետիրական կապիտալին (կանոնադիր ֆոնդին): Բանկի փայտերերը համարում են այդ ցուցանիշի նշանակությունը տարբեր բանկերում, այն համեմատում են տնտեսության մյուս հատվածների ցուցանիշների հետ՝ իրենց միջոցների տեղաբաշխման եկամտաբերության աստիճանի գնահատման համար:

Եկամտաբերության ցուցանիշը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

$$\frac{\text{Շահույթ}}{\text{Բաժնետիրական կապիտալ}} = \frac{\text{Շահույթ}}{\text{Բոլոր ակտիվները}} \times \frac{\text{Բոլոր ակտիվները}}{\text{Բաժնետիր. կապիտալ}}$$

հետևաբար, բանկային գործունեության «շահութաբերությունը» գտնվում է ուղիղ կախվածության մեջ ակտիվների «աշխատունակությունից», նրանց հատուցումից, եկամտաբերությունից, և կապիտալի բավականաչափության գործակցից: Այլ խոսքերով ասած, բանկին ձեռնտու է գործել ռիսկի սահմաններում, այսինքն, սեփական կապիտալով ակտիվների նվազագույն ապահովմամբ: Իր հերթին.

$$\frac{\text{Շահույթ}}{\text{Բոլոր ակտիվները}} = \frac{\text{Շահույթ}}{\text{Բանկի համախառն եկամուտ}} \times \frac{\text{Բանկի համախառն եկամուտ}}{\text{Բոլոր ակտիվները}}$$

այսինքն, «ակտիվների եկամտաբերության» վրա ազդում է մարժան (տարբերույթ): Մարժան ցույց է տալիս, թե բանկի համախառն եկամտի ո՞ր մասն է մնում նրա տրամադրության տակ: Այդ արդյունքը կախված է մի շարք գործոններից. բանկային գործառնություններից ստացված և վճարված տոկոսներից, եկամտահարկից (բյուջե մուծված), ընթացիկ ծախսերից և այլն: Բոլոր այս գործոնները գտնվում են բանկի ղեկավարության ուշադրության կենտրոնում, քանի որ նրանք կարող են պատասխան տալ այն հարցին, թե՞ ինչպես բարձրացնել բանկային գործունեության արդյունավետությունը: Հենց այդ նպատակի համար էլ կատարվում է վերլուծությունը: Բանկի կողմից ստացված շահույթի գործոնային վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու նրա ավելացման պահուստները:

Տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը և տրամադրված վարկերի ծավալների փոփոխությունը կարելի է վերլուծել ըստ ամերիկյան առևտրային բանկերի փորձի կիրառելով հետևյալ բանաձևերը.

1. եկամտի վրա տոկոսադրույքի ազդեցությունը. $(R_2 - R_1) V_2 = P_R$, որտեղ P -ն եկամուտն է, R -ը տոկոսադրույքի մակարդակը, V -ն տրամադրված վարկի ծավալը, 1 և 2-ը՝ համապատասխանաբար նախորդ և ընթացիկ ժամանակաշրջանները:

2. եկամտի վրա տրամադրված վարկի ծավալի փոփոխության ազդեցությունը. $(V_2 - V_1) R_1 = P_V$:

3. երկու գործոնների ազդեցությունը եկամտի վրա (ինտեգրալ ցուցանիշ). $(R_2 - R_1) (V_2 - V_1) = P_{RV}$:

Նմանատիպ ձևով կարելի է հաշվարկել գործոնների ազդեցությունը դեպոզիտների գծով վճարվող տոկոսների ծավալի փոփոխության վրա:

Բանկի եկամտաբերության բարձրացման գործոն է հանդիսանում եկամուտ չբերող ակտիվների կրճատումը: Ակտիվների խմբավորումը ըստ եկամտաբերության հատկանիշի հնարավորություն է տալիս առանձնացնելու եկամուտ չբերող ակտիվները: Դրամարկդի, թղթակցային և պահուստային հաշիվների հետ մեկտեղ դրանց են պատկանում հիմնական միջոցները և իմոբիլիզացված (անշարժացած) սեփական միջոցները: Պետք է ի նկատի ունենալ, որ եկամուտ չբերող ակտիվների նշանակալի ծավալը իջեցնում է շահութաբերությունը, սակայն մեծացնում է իրացվելիությունը: Բանկի սեփական ռեսուրսների մեծ տեսակարար կշիռը պասիվների կառուցվածքում փոքրացնում է բանկի համար ռեսուրսների ընդհանուր արժեքը, և հետևաբար բարձրացնում նրա շահութաբերությունը անկախ բանկի գործունեության ղեկավարման որակից: Այդ իսկ պատճառով էլ այդպիսի բանկերը կարող են ունենալ մեծ շահույթ՝ ցածր եկամտային մարժայի դեպքում:

Արդյունքային հաշիվների վերլուծությունը հնարավորություն է տալիս հաշվարկելու նվազագույն եկամտային մարժան, այսինքն, ակտիվային և պասիվային գործառնությունների գծով դրույքներում եղած ճեղքվածքը, որը բանկին հնարավորություն է տալիս փակելու անհրաժեշտ ծախսերը, սակայն

շահույթ չի բերում: Բանկի նվազագույն եկամուտների գործակցի հաշվարկման համար կիրառվում են հետևյալ տվյալները.

Վարչատնտեսական ծախսեր, այլ ծախսեր, հաշվեկշռի ակտիվի գումարը, ակտիվի այն հոդվածների գումարը, որը եկամուտ չի բերում

$$\text{Տարած.} = \frac{\text{Կնվազ Վարչատնտեսական ծախսեր - Այլ ծախսեր}}{\text{Հաշվեկշռի ակտիվի գումարը - եկամուտ չբերող ակտիվ}}$$

Որքան ցածր է այդ ցուցանիշը, այնքան շատ հնարավորություններ կան ավելացնելու շահույթը և այնքան բարձր է բանկի մրցունակությունը: Բանկի շահույթի տարեկան հավելածի գնահատման ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այն չպետք է ցածր լինի արժեզրկման տեմպերից, հակառակ դեպքում, այսինքն արժեզրկման գերազանցող տեմպերի դեպքում, տեղի կունենա իրական եկամուտների նվազում և բաժնետիրական կապիտալի արժեզրկում:

Առևտրային բանկերի եկամուտների և ծախսերի ավելի մանրամասն և խորը վերլուծության նպատակով անհրաժեշտ է կիրառել վերլուծական (անալիտիկ) հաշվառման և ներբանկային փաստաթղթերի տվյալները, որոնք հնարավորություն կտան եկամուտների կառուցվածքում որոշել գործառնական և այլ եկամուտների տեսակարար կշիռները, իսկ ծախսերի կառուցվածքում՝ գործառնական և այլ ծախսերի տեսակարար կշիռները: Ընդ որում, վերլուծությունը կարող է նաև մասնատված լինել ըստ վարկերի ժամկետների, որոնց գծով ստացվել կամ մուծվել են տոկոսները, ըստ հաճախորդների առանձին կատեգորիաների և այլն:

Բանկերի շահութաբերության վերլուծության ժամանակ կարևորագույն հարցերից է նաև միջին եկամտային մարժայի որոշումը, որն իրենից ներկայացնում է ակտիվային գործառնությունների գծով միջին տոկոսադրույքի գերազանցումը պասիվային գործառնությունների գծով ունեցած միջին տոկոսադրույքից:

Միջին տոկոսադրույքներն ինչպես ակտիվային, այնպես էլ պասիվային գործառնությունների գծով, հաշվարկվում են կշռված միջին թվաբանականի բանաձևով՝ առանձին գործառնությունների ծավալները բազմապատկելով ըստ այդ գործառնությունների եղած տոկոսադրույքներով, հարաբերելով ամբողջ

գործառնությունների ծավալին: Այն կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևի օգնությամբ

$$I = \frac{\sum_{k=1}^{k=n} I_k S_k}{\sum_{k=1}^{k=n} S_k}$$

որտեղ I -ն տոկոսադրույքներն են առանձին գործառնությունների գծով ($K=1,2,\dots,n$), S_k -ն առանձին գործառնությունների ծավալներն են:

Եթե բանկի ակտիվները նշանակենք A տառով, շահույթը ΠP -ով, եկամուտները D -ով, ծախսերը P -ով, ապա շահույթի հարաբերությունն ակտիվներին կարող ենք գրել հետևյալ տեսքով.

$$\frac{\Pi P}{A} = \frac{D - P}{A} = \frac{D}{A} - \frac{P}{A} \approx ia - in$$

որտեղ ia -ն և in -ը համապատասխանաբար ակտիվային և պասիվային գործառնությունների գծով տոկոսադրույքներն են արտահայտված հարաբերական միավորներով:

Հետևաբար, եկամտային մարժան i -ն տոկոսներով արտահայտված, մոտավորապես հավասար կլինի $\Delta i \approx \frac{\Pi P}{A} \times 100$ արտահայտությամբ:

Առևտրային բանկերի շահութաբերության բարձրացմանն ուղղված կառավարչական որոշումների կայացման ժամանակ հնարավոր է ի նկատի ունենալ այն հանգամանքը, որ շահութաբերության բարձրացման վրա ազդում են ակտիվային գործառնությունների գծով տոկոսադրույքների բարձրացումը և պասիվային գործառնությունների գծով դրանց իջեցումը, եկամուտ չբերող ակտիվների տեսակարար կշռի նվազեցումը, այլ եկամուտների ավելացումը և այլ ծախսերի պակասեցումը, ինչպես նաև բանկի սեփական և ներգրավված միջոցների հարաբերակցության փոքրացումը: Հարկավոր է նաև ի նկատի ունենալ, որ ամբողջությամբ վերցրած բանկի շահութաբերությունը որոշվում է նրա առանձին գործառնությունների գծով ունեցած շահութաբերությունների մակարդակներով, այդ իսկ պատճառով էլ օգտագործելով քանակական վերլուծության արդյունքները՝ միաժամանակ դրանք պետք է առանձնացնել ըստ գործառնությունների խմբերի, ժամկետների, հաճախորդների խմբերի,

բանկի մասնաճյուղերի և այլն: Այդպիսի մանրակրկիտ վերլուծությունների արդյունքների հիման վրա կարելի է առաջարկություն անել առավել շահութաբեր գործառնությունների ավելացման և նվազ շահութաբեր (կամ էլ վնասաբեր) գործառնությունների կրճատման (ընդհուպ մինչև դրանց դադարեցումը), բանկի ներքին կառուցվածքի վերակազմավորման, նրա անձնակազմի կրճատման ուղղությամբ: Ընդ որում, բնականաբար, բանկի հեռանկարում իրականացվելիք գործառնությունների գծով որոշումները պետք է ընդունվեն՝ հաշվի առնելով նրա մարքեթինգային գործունեությունը և հնարավոր ռիսկի գնահատականները:

Առևտրային բանկերի բավականաչափ շահույթի ստացումը կարևոր հանգամանք է, որն անհրաժեշտ է բանկերի նոր կապիտալի ներգրավման, մատուցվող ծառայությունների ծավալի և նրանց որակի բարձրացման հնարավորությունների ընդլայնման համար: Եթե բանկային գործում կապիտալին ընկնող եկամուտը ցածր է, քան մյուս ճյուղերում, կապիտալը ձգտում է կիրառման ուրիշ, ավելի շահութաբեր ոլորտների: Բանկերի շահույթի կարևորագույն ֆունկցիան է չկանխատեսված իրավիճակների կամ կորուստների դեպքում պահուստների ապահովումը: Եվ վերջապես, ինչպես այլ ճյուղերում, շահույթը խթանում է բանկի ղեկավարության գործունեությունը գործառնությունների ընդլայնման և կատարելագործման, ծախսերի իջեցման և ծառայությունների որակի բարձրացման գործում:

Բանկային շահույթը կարևոր է տնտեսական գործընթացի բոլոր մասնակիցների համար: Բաժնետերերը շահագրգռված են շահույթով, քանի որ այն իրենից ներկայացնում է եկամուտ՝ ներդրված կապիտալի գծով: Շահույթը բերում է եկամուտ ավանդատուների համար, քանի որ շնորհիվ պահուստների ավելացման և ծառայությունների որակի բարձրացման ձևավորվում է հուսալի, ամուր և արդյունավետ բանկային համակարգ: Փոխառուները անուղղակի կերպով նույնպես շահագրգռված են բավականաչափ բանկային շահույթի ստացման ուղղությամբ, որովհետև բանկի՝ վարկերի հատկացման գծով ունեցած հնարավորությունը, կախված է նրա կապիտալի չափերից և կառուցվածքից, իսկ շահույթը՝ սեփական կապիտալի հիմնական աղբյուրն է: